

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,  
ղեկավարվելով Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրով եւ մշակույթի բնագավառում գործող միջազգային պայմանագրերով եւ այլ ակտերով ու նորմերով,

ելնելով անձի մշակութային ինքնատիպության, ստեղծագործական ազատության, մշակութային գործունեության, հոգեկան պահանջմունքները բավարարելու եւ մշակութային արժեքներին հարակից դառնալու անբաժան իրավունքների առաջնայնությունից,

հաստատելով յուրաքանչյուր պետության եւ ժողովրդի սեփական մշակութային քաղաքականությունը ինքնուրույն մշակելու եւ անցկացնելու, երկկողմ եւ բազմակողմ մշակութային կապեր հաստատելու իրավունքները,

ճանաչելով բոլոր ժողովուրդների ազգային մշակույթների հավասար արժանիքները եւ ձգտելով օժանդակել դրանց փոխադարձ հարստացմանը՝ յուրաքանչյուր մշակույթի ինքնատիպության հարգանքի պայմանով,

նկատի ունենալով իրենց ազգային ու պետական կազմավորումներից դուրս բնակվող քաղաքացիների հոգեկան պահանջմունքները եւ շահերը,

ձգտելով զարգացնել եւ ամրապնդել մշակույթի բնագավառում պետությունների եւ ժողովուրդների միջեւ բարեկամական կապերն ու համագործակցությունը,

աջակցելով գեղարվեստական մտավորականության, մշակույթի եւ արվեստի գործիչների ստեղծագործական շփումները պահպանելու եւ զարգացնելու, նրանց սոցիալական ու մասնագիտական շահերը պաշտպանելու ձգտումը,

համարելով, որ մշակույթի բնագավառում համագործակցությունը կոչված է աջակցելու համամարդկային արժեքների հաստատմանը, հասարակական առաջընթացի եւ քաղաքացիական համաձայնության ապահովման համար պայմանների ստեղծմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

**ՀՈՂՎԱԾ 1**

Կողմերը պարտավորվում են բարենպաստ պայմաններ ստեղծել մշակութային կապերի եւ մշակութային փոխանակության ու թատերական, երաժշտական, կերպարվեստի, էստրադային եւ կրկեսային արվեստի, կինոյի, հեռուստատեսության եւ ռադիոյի, գրադարանային եւ թանգարանային գործի, պատմամշակութային ժառանգության հուշարձանների եւ այլ օբյեկտների պահպանության եւ նպատակահարմար օգտագործման, ժողովրդական ինքնագործունեության, ժողովրդական արհեստների եւ մշակութային գործունեության այլ ձեւերի զարգացման համար:

**ՀՈՂՎԱԾ 2**

Կողմերը կաջակցեն ազգային ու պետական կազմավորումներ չունեցող կամ այդ կազմավորումներից դուրս բնակվող ժողովուրդների եւ ազգությունների ազգային մշակութային կենտրոնների եւ այլ հասարակական կազմակերպությունների ստեղծմանը ու գործունեությանը, նրանց կցուցաբերեն մեթոդական, խորհրդատվական օգնություն եւ պրակտիկ աջակցություն:

**ՀՈՂՎԱԾ 3**

Կողմերը երաշխավորում են ձեւավորված ժողովածուների, հավաքածուների եւ Անկախ Պետությունների գրադարանային, թանգարանային եւ արխիվային ֆոնդերը կազմավորող այլ մշակութային արժեքների մատչելիությունը սույն Համաձայնագրի

մասնակից պետությունների քաղաքացիների համար իրենց քաղաքացիների հետ հավասար չափով եւ նույն պայմաններով:

Կողմերը սույն Համաձայնագրի բոլոր մասնակիցների համար ապահովում են Համագործակցության մյուս մասնակից պետությունների պետական ժողովածուներում, հավաքածուներում եւ ֆոնդերում պահվող ժողովուրդների պատմամշակութային արժեքների վերաբերյալ ամբողջական տեղեկության ստացումը եւ միջպետական ծրագրերի շրջանակներում դրա օգտագործումը՝ կրթության, գիտության եւ մշակույթի նպատակներով:

Կողմերը ընդունում են Կողմերի լիազոր ներկայացուցիչներից բաղկացած միջպետական փորձագիտական հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությունը՝ ներպետական օրենսդրության եւ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա գեղարվեստամշակութային արժեքների ռեստիտուցիայի համար հարցերի քննարկման եւ երաշխավորությունների պատրաստման համար:

#### ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը պարտավորվում են մշակութային համագործակցության համաձայնեցված ծրագրերի եւ ուղղակի պայմանագրային կապերի հիման վրա աջակցել գեղարվեստական խմբերի եւ առանձին կատարողների հյուրախաղերին, ազգային պահեստաֆոնդերին պարտադիր տպագիր, լուսանկարային եւ փաստաթղթային արտադրանքի փոխադարձ մատակարարմանը, ինտեգրացված գրադարանային տեղեկատվական համակարգերի, հավելյալ կատալոգների եւ միջգրադարանային աբոնեմենտների ստեղծմանը, գեղարվեստական ցուցահանդեսների եւ թանգարանային ցուցանմուշների, կինոֆիլմերի, հեռուստատեսային եւ ռադիոծրագրերի փոխանակմանը, մասնագիտական արվեստի եւ ժողովրդական ստեղծագործության բնագավառում փառատոների, մրցույթների, համաժողովների, սեմինարների, միջոցառումների անցկացմանը:

#### ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը, պայմանագրերի, համաձայնագրերի եւ խորհրդակցությունների հիման վրա, պարտավորվում են իրենց տարածքներում օժանդակել միասնական տեղեկատվական դաշտի ստեղծմանը հեռուստատեսային, ռադիո եւ տեսածրագրերի, տեղեկատվական գործակալությունների արտադրանքի, մամուլի, գրքերի եւ այլ տպագիր արտադրանքի ազատ փոխանակման եւ տարածման միջոցով, բացառությամբ Համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը հակասող դեպքերի:

#### ՀՈՂՎԱԾ 6

Կողմերը կօժանդակեն ստեղծագործական միությունների եւ միավորումների, հասարակական կազմակերպությունների, ասոցիացիաների, հիմնադրամների եւ այլ ոչ կառավարական կազմակերպությունների միջեւ համագործակցությանը եւ փոխադարձ կապերին, մշակույթի եւ արվեստի գործիչների միջեւ շփումների հաստատմանը, ինչպես նաեւ նրանց կազմի մեջ մտնող հանրապետությունների, ինքնավար կազմավորումների, երկրամասերի, շրջանների եւ քաղաքների միջեւ մշակույթի բնագավառում ուղղակի կապերի իրացմանը:

#### ՀՈՂՎԱԾ 7

Կողմերը փոխադարձ օժանդակություն կցուցաբերեն միջպետական մշակութային կապերի համատեղ ծրագրերի նախապատրաստման եւ իրացման, միջազգային հյուրախաղային եւ ցուցահանդեսային գործունեության կազմակերպման գործում: Կողմերը կօժանդակեն կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպությունների, մշակույթի եւ արվեստի հաստատությունների միջեւ համապատասխան միջազգային կազմակերպությունների,

ինչպես նաև արտերկրում հայրենակցական միությունների հետ ստեղծագործական միությունների համագործակցությանը:

#### ՅՈՒՂԱԾ 8

Կողմերը կխթանեն էսթետիկ դաստիարակության եւ ստեղծագործական կրթության, մասնագետների պատրաստման եւ որակավորման բարձրացման, մշակույթի եւ արվեստի կրթական հաստատությունների սովորողների եւ ուսանողների, փորձնականների եւ մասնագետների փոխշահավետ եւ հավասար հիմունքներով փոխանակման համակարգի կատարելագործման հարցերում համագործակցությունը:

#### ՅՈՒՂԱԾ 9

Կողմերը կիրականացնեն մշակույթի եւ արվեստի բնագավառում գիտահետազոտական աշխատանքների առաջնային ուղղությունների սահմանման համար պարբերաբար խորհրդակցություններ, գիտական հետազոտությունների արդյունքների մասին փոխադարձ իրազեկում, այդ նպատակների համար համատեղ գիտական եւ գիտապրակտիկ համաժողովների, սեմինարների եւ գիտաժողովների անցկացում, գիտական աշխատանքների, ժողովածուների հրատարակում, գիտական փոխանակման եւ համագործակցության այլ ձևերի հետազոտություն, ինչպես նաև մշակույթի վիճակագրության համաձայնեցված սկզբունքների մշակում:

#### ՅՈՒՂԱԾ 10

Կողմերը կօժանդակեն տարերային եւ այլ աղետներից տուժած շրջանների բնակչության մշակութային սպասարկման կազմակերպման գործում մշակույթի հաստատություններով եւ աշխատողներով պրակտիկ օգնության ցուցաբերման համար ջանքերի միավորմանը:

#### ՅՈՒՂԱԾ 11

Կողմերը կհամագործակցեն մշակույթի նյութատեխնիկական հիմքի զարգացման եւ ամրապնդման համատեղ ծրագրերի, նոր տեխնոլոգիաների փոխանակման, փոխշահավետ հիմունքներով մշակույթի եւ արվեստի հաստատությունների համար սարքավորումների եւ տեխնիկական միջոցների մատակարարումների կազմակերպման գործում:

#### ՅՈՒՂԱԾ 12

Կողմերը պարտավորվում են պահպանել մշակույթի եւ արվեստի բնագավառում աշխատանքի փորձի վերաբերյալ, մշակույթի ոլորտում քաղաքացիների իրավունքների եւ ազատությունների պահպանման ապահովման, մշակույթի հաստատությունների գործունեության իրավական եւ սոցիալ-տնտեսական կարգավորման, շուկայական տնտեսության անցման պայմաններում մշակույթի եւ արվեստի գործիչների շահերի պաշտպանության հարցերով խորհրդակցությունների պրակտիկան:

#### ՅՈՒՂԱԾ 13

Համագործակցության մշակութային կոնկրետ ծրագրերի եւ նախագծերի պրակտիկ իրացումը կիրականացվի եւ կֆինանսավորվի երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի հիման վրա:

#### ՅՈՒՂԱԾ 14

Սույն Համաձայնագրի իրականացման եւ մշակութային համագործակցության պրակտիկ

համակարգման նպատակով Կողմերը պայմանավորվեցին, անհրաժեշտության դեպքում, ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ եւ աշխատանքային խմբեր:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 15

Սույն Համաձայնագրի նորմերի մեկնաբանման եւ կիրառման հարցերը ենթակա են լուծման Կողմերի միջեւ խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով:

#### ՅՈՒՐԱԿՐԻ 16

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համաձայնագիրը բաց է սույն Համաձայնագրի նպատակները եւ սկզբունքները կիսող մյուս պետությունների կողմից միանալու համար: Միացող պետության համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ավանդապահ հանդիսացող Բելառուսի Հանրապետության Կառավարությանը միացման մասին փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Համաձայնագիրը՝ ավանդապահին գրավոր ծանուցելու միջոցով: Այդ Կողմի համար Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է ավանդապահի կողմից այդպիսի ծանուցում ստանալուց 6 ամիս հետո:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բևորինակով՝ ռուսերեն: Բևորինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

\* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: